ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEDA-A0BE-447B-82FA հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ

ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/7562/02/24 քաղ. Երևան
17 Նոյեմբերի 2025թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով ըստ հայցի՝ «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Ագաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 344 հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

I. ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.

1.1. «Ագաստ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 10.09.2024 թվականին էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով այսուհետ նաև՝ Համակարգ հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Ագաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

մասին թիվ 344 հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին:
1.2. Դատարանը 20.09.2024 թվականին որոշել է հայցադիմումն ընդունել վարույթ, պատասխանողից պահանջել ապացույցներ և դատական ակտի հրապարակման օր նշանակել 2024 թվականի հոկտեմբերի 01-ին:
1.3. Դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 01-ին կայացված վճռով հայցը բավարարվել է:
1.4. Դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 01-ին կայացված վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք:
1.5. Վերաքննիչ դատարանի 03.06.2025 թվականի որոշմամբ որոշվել է վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով և վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտը հրապարակել 06.06.2025 թվականին:
1.6. ՀՀ վերաքննիչ դատարանի 2025 թվականի հունիսի 06-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի և թիվ ԵԴ2/7562/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 01-ի վճիռը բեկանվել է և ամբողջ ծավալով ուղարկվել նոր քննության:
1.7. Քաղաքացիական գործը 2025 թվականի նոյեմբերի 11-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ա. Դունամալյանին և 2025 թվականի նոյեմբերի 12-ին Համակարգի միջոցով դարձել է հասանելի:

II. ԴԱՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.
2.1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, ինչպես նաև վերադաս դատարանից գործն ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որն ուղարկվում է գործին մասնակցող անձանց:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 410-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանվելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացվելու դեպքում գործն ուղարկվում է համապատասխան դատարան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար նույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով նույն գլխի առանձնահատկությունները:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է գործը նոր քննության ուղարկելու

մասին որոշմամբ սահմանված ծավալով:
Ելնելով վերոնշյալ իրավակարգավորումներից և հիմք ընդունելով այն, որ գործը մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին, իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 2025 թվականի հունիսի 06-ին կայացված որոշմամբ գործն ուղարկվել է Դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության համար, կարծում եմ, որ քննարկվող գործը պետք է ընդունել վարույթ և գործի նոր քննությունն իրականացնել վերոնշյալ որոշմամբ սահմանված ծավալով:

II. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Տվյալ դեպքում, ելնելով հայցի հիմքում դրված փաստերի առանձնահատկություններից՝ Դատարանը կարծում է, որ գործի քննությունը պետք է իրականացնել գրավոր ընթացակարգով:
III. Դատարանը, հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 165-166-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 410-411-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. ըստ հայցի՝ «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Ագաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 344 հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/7562/02/24 քաղաքացիական գործն ընդունել վարույթ և գործի քննությունն իրականացնել գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով:
2. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
3. Գործի քննություն իրականացնել գրավոր ընթացակարգով:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամալյան

Digitally signed by DUNAMALYAN AZAT 1809870089
Date: 2025.11.17 14:02:08 AMT

cabinet.armlex.am